Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

Հայցադիմումը վարույթ ընդունելու, պատասխանողից ապացույցներ պահանջելու և գործը գրավոր ընթացակարգով քննելու մասին

5 հունիսի 2023թ. ք.Երևան
Քաղաքացիական գործ՝ ԵԴ2/6930/02/23

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի դատավոր Մ.Հովակիմյանս ծանոթանալով «ԳԱՊ ՇԻՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրեն Վիգեն Ուրուշանյանի կողմից ներկայացված հայցադիմումին և կից փաստաթղթերին.

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

«ԳԱՊ ՇԻՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրեն Վիգեն Ուրուշանյանը 2023թ. մայիսի 30-ին հայցադիմում է ներկայացրել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարան ընդդեմ ՀՀ դատական դեպարտամենտի՝ ՀՀ դատական դեպարտամենտի՝ «ԳԱՊ ՇԻՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին 2023թ. մայիսի 2-ի թիվ 5 որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին, որը դատավորի աշխատակազմին է հանձնվել 2023թ. մայիսի 31-ին:

Ուսումնասիրելով հայցադիմումը և կից փաստաթղթերը՝ գտնում եմ, որ այն ենթակա է ընդունման վարույթ:

Միաժամանակ հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հայցադիմումը վարույթ ընդունելու հետ միաժամանակ դատարանը կայացնում է որոշում՝ պատասխանողից տվյալ գնման գործընթացի հետ կապված պատասխանողի տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները պահանջելու մասին, գտնում եմ, որ անհրաժեշտ է պատասխանողից պահանջել թիվ ԴԴ-ԳՀԱՇՁԲ-23/1 ընթացակարգի ծածկագրով գնման գործընթացի հետ կապված պատասխանողի տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները:

Բացի այդ, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.9-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը սույն գլխով նախատեսված վեճերով գործերը քննում և դրանց վերաբերյալ վճիռները և որոշումները կայացնում է գրավոր ընթացակարգով, բացառությամբ այն դեպքերի, երբ դատարանը գործին մասնակցող անձի միջնորդությամբ կամ իր նախաձեռնությամբ եկել է եզրահանգման, որ անհրաժեշտ է գործը քննել դատական նիստում:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ գործին մասնակցող անձը չի միջնորդել գործը քննել դատական նիստում՝ գտնում եմ, որ անհրաժեշտ է տվյալ քաղաքացիական գործը քննել գրավոր ընթացակարգով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 124-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 125-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով, 234.6-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով և 234.9-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

«ԳԱՊ ՇԻՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հայցն ընդդեմ ՀՀ դատական դեպարտամենտի՝ ՀՀ դատական դեպարտամենտի՝ «ԳԱՊ ՇԻՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին 2023թ. մայիսի 2-ի թիվ 5

որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին ընդունել վարույթ և գործը քննել գրավոր ընթացակարգով:

Պատասխանող ՀՀ դատական դեպարտամենտին՝ սույն որոշումը ստանալուց հետո հնգօրյա ժամկետում դատարան ներկայացնել թիվ ԴԴ-ԳՀԱՇՁԲ-23/1 ընթացակարգի ծածկագրով գնման գործընթացի հետ կապված իր տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները:

Եզրափակիչ դատական ակտը հրապարակել 2023թ. հուլիսի 17-ին դատական իշխանության պաշտոնական կայքի միջոցով (www.datalex.am):

Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:

ԴԱՏԱՎՈՐ Մ.ՀՈՎԱԿԻՄՅԱՆ